

) Կ կենտկոմի քարտուղարներ— ընկ. ընկ. Գ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. Զ. ՄԱՐԳԱՐՅԱՆ և Հ. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՑԻՈՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ին իր աշխատանքն ավարտեց Հայաստանի Կ (բ) Կ

յ ՀԿ (բ) Կ կենտկոմի քարտուղարների պաշտոնից
ն և Ստ. Ակոպովին:
Կ կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց ընկ. Գ.
, յերկրորդ քարտուղար՝ ընկ. Ա. Զ. Մարգարյանին
ր՝ ընկ. Հ. Ս. Գալստյանին:
ՀԿ (բ) Կ կենտկոմի բյուրո հետևյալ կազմով՝

ՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
ԵԼՅԱՆ,
ԳԱՐՅԱՆ,
ՍՏՅԱՆ,
ՂՅԱՆ,
,
ՈՐՅԱՆ,
ՅԵԿՈՎ,
ԵՓՅԱՆ:

յի թեկնածուներ՝
ՆՈՎ,
ՍՅԱՆ:

կ ուղարկեց ժողովուրդների առաջնորդ ընկեր

Ն ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԸ

եյտերը» նկա-
երի 23-ին ճա-
ների հարձակու-
ելի մասին կրած
ակներները: Զի-
ելած տարերկ-
է թերթը,—
վեցին տեսնելով
ավերի տասկա-
Պետական կամ
ից ոչ մեկը չի
ավորներով խիտ
մասերը, թաղե-

խառնվում են սպանված յերեխաների դիակների վրա ծնողների լաց ու կոծին:

«Դեյլի Տելեգրաֆը» հաղորդում է, թե Կանտոնում սեպտեմբերի 23-ի ճապոնական ինքնաթիռների ռմբակոծության ժամանակ սպանվել են համարյա 8000 հոգի: Բոլոր հաղորդագրություններում շեշտված է, վոր ճապոնական ռմբակոծության զոհ են գնացել բացառապես խաղաղ բնակիչները:

*

ԸՆԿ. Գ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գրիգոր Արտեմի Հարությունյանը ծնվել է 1900 թվականին նախկին Թբիլիսիի նահանգի Թելավ գյուղում: Նա կոմունիստական կուսակցության մեջ մտել է 1919 թվականին: Ընդհատակյա հեղափոխական աշխատանք է տարել այնտեղ դեռևս այն ժամանակ, յերբ Վրաստանում իշխում եյին մենշևիկները:

Ակտիվ ընդհատակյա հեղափոխական, բոլշևիկյան համառ աշխատանքի համար, ընկ. Հարությունյանը դեռ Թելավի գիմնազիայի աշակերտ յեղած ժամանակ յենթարկվել է մենշևիկյան իշխանության հալածանքներին: 1920 թվականին նա ձերբակալվել և բանտում մնացել է մինչև Վրաստանում, այդ թվում նաև Կախեթիայում խորհրդային իշխանության հաստատումը:

Վրաստանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո ընկ. Գ. Հարությունյանն ընտրվեց Վրաստանի Կ(բ)Կ Թելավի գավառական կոմիտեյի քարտուղար: 1922 թվականին նա աշխատում եր վրացական դիվիզիայի քաղբաժնում, վորտեղից ուղարկվեց Մոսկվա սովորելու: Մոսկվայում մինչև 1924 թվականը նա սովորում եր Կարլ Մարքսի անվան ժողովրդական Տնտեսության Ինստիտուտում:

Ինստիտուտից դուրս գալուց հետո ընկ. Գ. Հարությունյանը կուսակցական ղեկավար աշխատանք է տարել Վրաստանի մի շարք կուսակցական կազմակերպություններում՝ Թբիլիսիի կազմակերպության լենինյան ռայոնում, կուսակցության Թելավի գավառական կոմիտեյում և այլն: 1927 թվականին նա փոխադրվեց Վրաստանի Կ(բ)Կ կենտկոմ, վորպես գյուղում տարվելիք աշխատանքի բաժնի վարիչ: 1930 թվականին աշխատել է վորպես Բանգյուղտեսչության ժողկոմի և Վրաստանի Կ(բ)Կ կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ, 1931 թվականին՝ Վրաստանի Կ(բ)Կ կենտկոմում, վորպես կազմբաժնի վարիչ և քարտուղարության անդամ: 1934 թվականի հունվարից ընկ. Գ. Հարությունյանը աշխատում եր Վրաստանի Կ(բ)Կ Թբիլիսիի քաղաքային կոմիտեյում վորպես քարտուղար: 1926 թվականից նա Վրաստանի Կ(բ)Կ կենտկոմի անդամ է: 1930 թվականից նա անդամ եր Անդր. ԿՎՀ-ի և Համ. Կ (բ) Կ Անդրյերկոմի, և Անդրյերկոմի բյուրոյի անդամության թեկնածու: Ընկ. Գ. Հարությունյանն անդամ է ԽՍՀՄ կենտգործկոմի և Վրաստանի կենտգործկոմի:

1936 թվականին, Վրաստանի խորհրդային իշխանության 15-րդ տարեդարձին, ընկ. Գ. Հարությունյանը, ակտիվ աշխատանքի համար, ԽՍՀՄ կառավարության կողմից պարգևատրվեց Լենինի շքանշանով:

ՀԿ(բ)Կ կենտկոմի վերջին պլենումը (սեպտեմբերի 23-ին) ընտրեց ընկ. Գ. Հարությունյանին ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար: